ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2026-2027 ուսումնական տարում հայցորդ Աշոտ Պետրոսյանի գիտական ղեկավար ի.գ.դ., պրոֆեսոր Գ. Ղազինյանի՝ աշխատանքից ազատվելու կապակցությամբ առաջացել է գիտական ղեկավարի փոփոխության անհրաժեշտություն, հայցորդի գիտական ղեկավար նշանակել ամբիոնի պրոֆեսոր, ի.գ.դ. Վահե Գուրգենի Ենգիբարյանին:

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**8.2.2. ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 3-րդ տարվա առկա ասպիրանտ Գեղեցիկ Արայիկի Բալյանի գիտական ղեկավարի փոփոխության մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ի.գ.դ., պրոֆեսոր Ս. Դիլբանդյանը, պրոֆ. Հ. Խաչիկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2026-2027 ուսումնական տարում Գեղեցիկ Արայիկի Բալյանի գիտական ղեկավար ի.գ.դ., պրոֆեսոր Գ. Ղազինյանի՝ աշխատանքից ազատվելու կապակցությամբ առաջացել է գիտական ղեկավարի փոփոխության անհրաժեշտություն, գիտական ղեկավար նշանակել ամբիոնի ի.գ.դ., պրոֆեսոր Սամվել Աղվանի Դիլբանդյանին:

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**8.3. ԼՍԵՑԻՆ.** Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցերը:

**8.3.1. ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առկա ասպիրանտ Լուսինե Արմանի Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆեսոր Հ. Խաչիկյանը, պրոֆեսոր Ս. Դիլբանդյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հիմք ընդունելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ հաստատել ամբիոնի առկա ասպիրանտ Լուսինե Արմանի Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության տեսա-իրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում՝ մարդու իրավունքների եվրոպական չափանիշների համատեքստում» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք»:

բ/ գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Վահե Գուրգենի Ենգիբարյանին:

գ/ միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**8.3.2. ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առկա ասպիրանտ Անահիտ Վիգենի Բաբախանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆեսոր Հ. Խաչիկյանը, պրոֆեսոր Ս. Դիլբանդյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հիմք ընդունելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ հաստատել ամբիոնի առկա ասպիրանտ Անահիտ Վիգենի Բաբախանյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Ընդդատության ինստիտուտը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք»:

բ/ գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Սամվել Աղվանի Դիլբանդյանին:

գ/ միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**8.3.3. ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առկա ասպիրանտ Կլարա Արծրունու Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆեսոր Հ. Խաչիկյանը, ի.գ.թ., ասիստենտ Գ. Վիրաբյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հիմք ընդունելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը՝ հաստատել ամբիոնի առկա ասպիրանտ Կլարա Արծրունու Հովհաննիսյանի թեկնածուական

ատենախոսության թեման՝ «Տեխնոլոգիական զարգացումների ազդեցությունը իրավական կոլիզիաների և օրենսդրական բացերի առաջացման վրա. հաղթահարման իրավական կառուցակարգերը» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն»:

բ/ գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոցենտ Տ. Սիմոնյանին:

գ/ միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**8.3.4. ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առկա ասպիրանտ Մայա Վալերիկի Նադոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆեսոր Հ. Խաչիկյանը, դոցենտ Վ. Այվազյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հիմք ընդունելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ հաստատել ամբիոնի առկա ասպիրանտ Մայա Վալերիկի Նադոյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Վարչական մարմինների հայեցողական լիազորությունների իրացումը» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք»:

բ/ գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Ն. Այվազյանին:

գ/ միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**8.4. ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, ի.գ.թ., ասիստենտ Գևորգ Վիրաբյանին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ ընտրելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆեսոր Հ. Խաչիկյանը

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, ի.գ.թ., ասիստենտ Գևորգ Վիրաբյանին ընտրել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ:

***Խորհրդի նախագահ*** ***Հ.Խաչիկյան***

***Խորհրդի քարտուղար*** ***Մ. Խաչատրյան***

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
**ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի 2025-2026 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ**

Ձեր ուշադրությանն ենք ներկայացվում քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի 2025-2026 թթ. ընթացքում իրականացված ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին ամփոփ հաշվետությունը: Խնայելով ձեր ժամանակը և չչարաշահելով ձեր համբերությունը՝ կաշխատենք այն ներկայացնել հիմնական մի քանի ուղղություններով առավել հակիրճ կերպով:

Հիմնական են համարվում՝ գործունեության ուսումնական և գիտական ուղղությունները, որոնց կողքին սակայն ուշադրությունից դուրս չեն մնա նաև այնպիսի հարակից ուղղություններ, ինչպիսիք են ամբիոնային աշխատանքների հանրայնացմանն ու միջազգայնացմանն ուղղված ջանքերը, գիտական կադրերի պատրաստումը և վերապատրաստումը, որոնք ըստ էության նույնպես ուսումնական են և գիտական:

2025-2026 ուսումնական տարվա ընթացքում Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմն իրականացրել է ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով նախատեսված ուսումնական, մեթոդական և գիտահետազոտական աշխատանքների ամբողջական ծավալը՝ ապահովելով ուսումնական գործընթացի պատշաճ որակ և շարունակականություն: Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը հաշվետու ժամանակահատվածում ներառել է երեք պրոֆեսոր, ութ դոցենտ, վեց ասիստենտ և յոթ դասախոս:

**1. Ուսումնական գործընթացը բակալավրիատում**

***1.1. Ուսումնական պլանների և ծրագրերի արդիականացում***

Հաշվետու ուսումնական տարում ամբիոնում դասավանդվող բոլոր դասընթացների ծրագրերն ու աշխատանքային օրացուցային պլանները վերանայվել և թարմացվել են: Ծրագրերի արդիականացումն անհրաժեշտություն էր՝ պայմանավորված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխություններով և լրացումներով, ինչպես նաև դատական իշխանության և իրավապահ համակարգի գործունեությունը կանոնակարգող օրենսդրական ակտերի փոփոխություններով: Այս մոտեցումն ապահովում է դասավանդվող նյութի համապատասխանությունը գործող իրավակարգավորումներին և կանխարգելում է տեսական դասընթացների և գործող օրենսդրության միջև հնարավոր անհամապատասխանությունը:

***1.2. Դասավանդման մեթոդաբանություն***

Ամբիոնում դասավանդվող բոլոր դասընթացների դասախոսությունները կազմակերպվել են ինտերակտիվ մեթոդով, ընդ որում՝ հատուկ ուշադրություն է հատկացվել արդարադատության ոլորտում նոր ինստիտուտների ներդրմանն առնչվող թեմաներին: Առաջնահերթություն է տրվել գործնական պարապմունքներին և

ուսանողների ակադեմիական ինքնուրույնությանը, ուսանողներին պարբերաբար հանձնարարվել են առանձին հիմնահարցերի շուրջ քննարկումներ նախապատրաստելու առաջադրանքներ:

Գործնական պարապմունքների արդյունավետությունն ապահովող կարևոր գործոն է այն հանգամանքը, որ դրանք վարող դասախոսներից յուրաքանչյուրը զուգահեռաբար իրականացնում է պրակտիկ մասնագիտական գործունեություն և ամբիոնում դասավանդում է համատեղությամբ: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս ուսանողների քննարկմանը ներկայացնելու տվյալ թեմայի շրջանակներում իրավակիրառ պրակտիկայում փաստացի առաջացող խնդիրները, ինչպես նաև այնպիսի վիճահարույց հարցեր, որոնք դեռևս չունեն միանշանակ օրենսդրական կարգավորում, այն ուսանողներին հնարավորություն է ընձեռում ձևակերպելու և հիմնավորելու սեփական իրավական դիրքորոշումը:

Գործնական պարապմունքների ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է հատկացվել դատական պրակտիկային, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներին: Այս մոտեցումը միտված է ապահովելու, որ ուսանողներն արդեն իսկ ուսումնառության փուլում իրազեկվեն կայացած որոշիչ նախադեպային որոշումներից և ձեռք բերեն դրանք հետագա մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային կիրառելու հմտություն:

***1.3. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում***

Հաշվետու տարում շարունակաբար և արդյունավետորեն կիրառվել է MOODLE էլեկտրոնային ուսուցման համակարգը: Ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաների բովանդակությունը համակարգում ամբողջությամբ թարմացվել և համապատասխանեցվել է ՀՀ գործող օրենսդրության կարգավորումներին: Համակարգը մասնավորապես արդյունավետ միջոց է հանդիսացել հեռակա ուսուցման ուսանողների կրթական կարիքները բավարարելու համար:

***1.4. Գնահատման համակարգ***

Ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաներով ընթացիկ և միջանկյալ քննությունները կազմակերպվել են գործնական խնդիրների և իրավիճակների վերլուծության հիման վրա: Նման մոտեցումն ընտրվել է որպես գնահատման առավել հավաստի գործիք, քանի որ այն հնարավորություն է տալիս միաժամանակ ստուգելու ուսանողի՝ ինչպես օրենսդրության իմացության մակարդակը, այնպես էլ կոնկրետ իրավական իրավիճակում համապատասխան իրավունքի նորմը կիրառելու գործնական հմտությունը:

Քրեական դատավարություն դասընթացից ուսանողների ընթացիկ մասնակցության մակարդակը և գիտելիքները գնահատելու նպատակով միջանկյալ քննություններից առաջ անցկացվել է լրացուցիչ թեստային ստուգում, որը թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների կողմից գնահատվել է որպես գնահատման արդյունավետ գործիք:

***1.5. Ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմատիկա***

Հաշվետու ուսումնական տարում ամբողջությամբ վերանայվել է ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների ցանկը՝ այն համապատասխանեցնելով քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգավորումներին, ինչպես նաև պրակտիկայում առաջացող խնդիրների գիտական ուսումնասիրության արդի պահանջներին: Ուսումնական տարվա սկզբում ամբիոնի դասախոսներին առաջարկվել է ներկայացնել հետազոտական թեմաներ, որոնք քննարկվել են ամբիոնի նիստում և ընդգրկվել թեմատիկ ցանկում: Ամբիոնում պահպանվող ավանդույթի համաձայն՝ նախապատվությունը տրվել է համեմատաբար նեղ և հստակ սահմանված թեմաներին, ինչը հնարավորություն է տալիս ուսանողին տվյալ շրջանակներում իրականացնելու ավելի խորը և նպատակաուղղված հետազոտություն:

***1.6. Մասնագիտացման դասընթացների հետազոտական բաղադրիչ***

Հաշվետու տարում շարունակվել է 3-րդ և 4-րդ կուրսերում դասավանդվող մասնագիտացման դասընթացների հետազոտական բաղադրիչի զարգացման միտումը: Դասախոսների կողմից ընտրվել են գործնական նշանակություն ունեցող այնպիսի թեմաներ, որոնք միաժամանակ պահանջում են խորացված տեսական վերլուծություն:

***1.7. Միջազգային ակադեմիական փոխանակում***

- Էրազմուս+ ծրագրի շրջանակներում ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու Դավիթ Մելքոնյանը Ժննի համալսարանի ուսանողուհի Մարի-Քլեր Ֆորքունենոյին անգլերեն լեզվով դասավանդել է «Մարդու իրավունքների պաշտպանության չափանիշները քրեական դատավարությունում» դասընթացը:
- Էրազմուս+ ծրագրի շրջանակներում ամբիոնի դասախոս, իրավ. գիտ. թեկնածու Առնոլդ Վարդանյանը Բեռլինի Ազատ համալսարանի ուսանողուհի, Չեխիայի քաղաքացի Անետա Բրադովային օտար լեզվով՝ անգլերեն դասավանդել է «Մարդու իրավունքների կոնֆիլիկտների լուծում>> առարկան:

**2. Ուսումնական գործընթացը մագիստրատուրայում**

Մագիստրատուրայում ևս ուսումնական գործընթացը կազմակերպվել և իրականացվել է պատշաճ մակարդակով: Ամբիոնն ամբողջությամբ վերանայել է մագիստրոսական թեզերի թեմատիկան՝ դրանք առավել սերտորեն կապելով օրենսդրական նոր զարգացումների հետ և տալով առավել կիրառական ուղղվածություն: Հաշվետու տարում մագիստրոսական աշխատանքների ղեկավարման և պաշտպանության գործընթացն իրականացվել է պատշաճ մակարդակով:

Մագիստրատուրայում դասավանդվող առավել կիրառական ուղղվածության դասընթացների մի մասում էականորեն վերանայվել է դասավանդման մեթոդիկան. մասնավորապես՝ նախապատվությունը տրվել է ուսանողների զույգերով աշխատանքի մեթոդին, որի շրջանակներում ուսանողները կազմում են դատավարական

համապատասխան ակտեր, իրականացնում վարույթ, հետազոտում ապացույցներ և նախապատրաստում դատական ճառ։

Հաշվետու տարում մագիստրատուրայում ներդրվել է նոր դասընթաց՝ «Առանձին տեսակի (հատուկ) վարույթների հիմնահարցերը քրեական դատավարությունում», ուսումնական ծրագիր ներառելու ուղղությամբ։

**3. Ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) գործունեություն**

Հաշվետու ուսումնական տարում ամբիոնի գծով ՈՒԳԸ աշխատանքներն իրականացվել են պատշաճ մակարդակով.

- Կազմակերպվել է բանախոսություն «Էլեկտրոնային ապացույցների դերը քրեական դատավարությունում» թեմայով, այն վարել է ամբիոնի դոցենտ Ս. Մարաբյանը։
- Կազմակերպվել է ուսումնական դատախաղ, որի ընթացքում ուսանողները հանդես են եկել որպես դատավարության կողմեր՝ կիրառելով իրենց տեսական գիտելիքները գործնական իրավիճակում։ Դատախաղին ներկա են եղել 50-ից ավել ուսանողներ։
- Կազմակերպվել է «Իրավունքը 21-րդ դարում. խնդիրներ և հեռանկարներ>> խորագրով գիտաժողով։ Քրեական դատավարության ենթաբաժանմունքում զեկույցներով հանդես են եկել 11 ուսանող։
- Կազմակերպվել է բանախոսություն՝ «Ապացույցների թույլատրելիության հիմնախնդիրները» թեմայով։ Այն վարել է քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ Դավիթ Մելքոնյանը։
- Ամբիոնը երկու թիմով մասնակցել է IRZ կողմից կազմակերպված միջբուհական դատախաղին, որպես մարզիչներ ամբիոնից ներգրավված են եղել դասախոսներ՝ Պ. Մկրտչյանը և Լ. Հովհաննիսյանը։

**4. Գիտահետազոտական աշխատանք**

***4.1. Հրատարակչական գործունեություն***

1. ՀՀ օրենսդրության մեջ կատարված փոփոխությունները հաշվի առնելով՝ 2025 թվականի աշնանը վերահրատարակվել է «Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգը» դասընթացի դասագիրքը, ԵՊՀ հրատ. 2025թ։
2. Հրատարակվել է «Քրեական դատավարություն. Առաջին մաս։ Ընդհանուր դրույթներ և մինչդատական վարույթ»։ Դասագիրքը, ԵՊՀ հրատ., Երևան 2026թ
3. Հրատարակվել են 1 մենագրություն, 1 իրավական ուսումնասիրություն, 2 իրավական ուղեցույց։
4. Հրատարակվել է 24 գիտական հոդված, ևս 6 գիտական հոդված հանձնվել է Scopus-ում գրանցված ամսագրերում տպագրության։

***4.2. Մասնակցություն գիտական նստաշրջանների***

Ամբիոնը մասնակցել է 2025 թվականի դեկտեմբերի 11-ին կազմակերպված ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների տարեկան գիտական նստաշրջանին, ներկայացրել ութ զեկուցում:

2026 թվականի մայիսի 25-ին ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է գիտագործնական համաժողով՝ *<<Քրեական դատավարության իրավունքի տեսական և գործնական հիմնախնդիրները>>* խորագրով, նվիրված իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ վաստակավոր իրավաբան *Դավիթ Զաքարի Ավետիսյանի 75-ամյակին,* որին մասնակցել են ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը, ասպիրանտները, ինչպես նաև դատական և իրավապահ համակարգի ներկայացուցիչներ: Համաժողովի ընթացքում ներկայացված զեկուցումները որպես գիտական հոդվածներ կիրապարակվեն «Պետություն և իրավունք» ամսագրի առաջիկա համարում:

**5. Միջազգային համագործակցություն**

Հաշվետու ուսումնական տարում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներն մասնակցել են նաև արտասահմանյան գիտական միջոցառումներին: Այսպես.

- Ամբիոնի պրոֆեսոր Ս. Դիլբանդյանը առցանց մասնակցել է Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում 2026 թվականի մարտի 29-ին՝ «Ռուսաստանի քրեական դատավարության արդիական հարցերը», խորագրով կազմակերպված գիտական կոնֆերանսին և հանդես եկել բացման խոսքով:
- Ամբիոնի պրոֆեսորներ Ս. Դիլբանդյանը և Վ. Ենգիբարյանը առցանց մասնակցել են 2026թվականի ապրիլի 24-ին Սարատովի պետական իրավաբանական ակադեմիայի կողմից կազմակերպված «Պետությանը, իրավունքին և իրավական պետությանը ծառայելու 95 տարի», խորագրով կազմակերպված գիտական կոնֆերանսին և հանդես են եկել զեկուցմամբ, որը հրատարակվել է գիտաժողովի ժողովածում:
- Ամբիոնը առցանց մասնակցել է 2025 թվականի նոյեմբերի 2-ին Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի (МГИМО) կողմից կազմակերպված գիտական կոնֆերանսին:
- Ամբիոնը առցանց մասնակցել է Օ.Ե. Կուդաֆինի անվան Մոսկվայի պետական իրավաբանական համալսարանի մայիսի 15-ին կազմակերպված գիտական կոնֆերանսին:
- Ամբիոնի դոցենտ Տ. Սուջյանը 2025թվականի նոյեմբերին մասնակցել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան և Եվրոպայի խորհուրդ կազմակերպված երկօրյա այցին, որի շրջանակներում հանդիպումներ է ունեցել ՄԻԵԴ վճիռների կատարման վարչության, հայկական ստորաբաժանումների, խոշտանգումների կանխարգելման կոմիտեի քարտուղարության վարչության

ներկայացուցիչների հետ: Այդ այցի շրջանակներում նա մասնակցել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի նիստին և եզակի հնարավորություն ունեցել անմիջականորեն ծանոթանալ Մեծ պալատի գործունեությանը և նիստերի անցկացման ընթացակարգին: Այդ ամենը նրա կողմից ներկայացվել է ուսանողներին:

- Ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Առնոլդ Վարդանյանը 2025-2026 ուսումնական տարում հանդիսացել է այցելու հետազոտող (Visiting Researcher) Շվեդիայում՝ Ռաուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների և միջազգային իրավունքի ինստիտուտում:

**6. Կադրային ապահովվածություն**

Ամբիոնը որոշակի մարտահրավերներ ունի կադրային ապահովվածության ոլորտում՝ պայմանավորված դասախոսական կազմի հիմնական մասի համատեղության հիմունքներով աշխատանքի հանգամանքով: Հաշվետու տարում ամբիոնում դասավանդել են 6 հիմնական և 18 համատեղության կարգով դասախոս: Ամբիոնն ունի 2 առկա ասպիրանտ, 2 հեռակա ասպիրանտ և 7 հայցորդ: Այս հարաբերակցությունը մատնանշում է հիմնական դասախոսական կազմի համալրման անհրաժեշտությունը՝ ուսումնական գործընթացի կայունությունն ու շարունակականությունն ամրապնդելու նպատակով:

**7. Ուսանողական հարցման արդյունքներ**

Ամբիոնի գործունեության վերաբերյալ իրականացված ուսանողական հարցման արդյունքներով ամբիոնը գնահատվել է՝ 1-ին կիսամյակում՝ 4.85 միավոր, 2-րդ կիսամյակում՝ 4,93 (հնգաբալանոց սանդղակով): Առաջին և երկրորդ կիսամյակների ցուցանիշները վկայում են հաշվետու տարվա ընթացքում ամբիոնի կողմից իրականացված ուսումնական, գիտական, մեթոդական և կազմակերպչական աշխատանքների արդյունավետության մասին:

***Եզրակացություն***

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ 2025-2026 ուսումնական տարում Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնն ապահովել է ուսումնական, մեթոդական, գիտահետազոտական և միջազգային համագործակցության ուղղություններով նախատեսված աշխատանքների արդյունավետ իրականացումը:

Առկա են նաև զարգացման որոշակի ուղղություններ, մասնավորապես՝ հիմնական դասախոսական կազմի համալրման անհրաժեշտությունը, որը ամբիոնի ծրագրային զարգացման առաջնահերթություններից մեկն է: Մյուս կարևոր հարցը՝ մագիստատուրայում դասավանդվող նոր դասընթացներով մասնագիտական գրականության պատրաստումը:

Այսքանով թույլ տվեք սահմանափակվել, և եթե չեմ քննարկել առանձին հարցեր, պատրաստ եմ դրանց անդրադառնալ հնարավոր հարցադրումների շրջանակներում:

Շնորհակալություն ուշադրության համար:

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Իրավաբանական կլինիկա
## 2025-2026 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ

Ձեր ուշադրությանն ենք ներկայացվում իրավաբանական կլինիկայի 2025-2026 թթ. ընթացքում իրականացված գործունեության մասին ամփոփ հաշվետությունը: Խնայելով ձեր ժամանակը՝ կաշխատենք այն ներկայացնել հիմնական մի քանի ուղղություններով առավել հակիրճ կերպով:

ԵՊՀ իրավաբանական կլինիկան 2025-2026 ուս. տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում ձևավորել է ուսանողական խմբեր՝ «Քաղաքացիական իրավունք/դատավարություն/վարչական իրավունք/դատավարություն» և «Քրեական իրավունք/դատավարություն/Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) գանգատներ» մասնագիտացումներով:

Կլինիկա է ընդունվել 25 ուսանող, որից 19-ը առկա բակալավրիատի 4-րդ կուրսի, 6-ը՝ մագիստրատուրայի: Նշված ժամանակահատվածում 7 ուսանող անձնական հանգամանքներով պայմանավորված դուրս են եկել կլինիկայից, մնացյալ 18-ը ձևավորել են կլինիկական ուսուցման մասնագիտական խմբերը՝ «Քաղաքացիական իրավունք/դատավարություն/վարչական իրավունք/դատավարություն» մասնագիտացում՝ 7 ուսանող, «Քրեական իրավունք/դատավարություն/ՄԻԵԴ» մասնագիտացում՝ 7 ուսանող և «Իրավունք բոլորի համար»՝ 10 ուսանող, որոնցից 6-ը համատեղել են իրենց կլինիկական զբաղվածությունը այլ մասնագիտական խմբերի հետ:

2025-2026 ուս. տարվա համար ԵՊՀ իրավաբանական կլինիկան հաճախորդների ընդունելությունը և իրավաբանական ծառայությունների մատուցումն սկսել է 2025թ. հոկտեմբերի 6-ից և դադարեցրել 2026թ. մայիսի 18-ին: Նշված ժամանակահատվածում կլինիկայում անվճար իրավաբանական ծառայություն է ստացել 141 հաճախորդ, որից 100-ը՝ քաղաքացիաիրավական խնդիրներով, 23-ը՝ վարչական, 15-ը՝ քրեական, 3-ը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվող գանգատ կազմելու գործերով, որից 1-ը Արցախից բռնի տեղահանված անձանց խախտված սեփականության իրավունքի վերականգնման պահանջով: ՄԻԵԴ գանգատ կազմելու վերաբերյալ դիմումներից 1-ի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դիմելու՝ կոնվենցիայով նախատեսված հիմքերը բացակայում են, քաղաքացուն տրամադրվել է իրավախորհրդատվություն: Հաշվետու ժամանակաշրջանում ՄԻԵԴ ուղարկվել է 1 գանգատ, որի գրանցված լինելու վերաբերյալ տեղեկատվության ստացումը սպասման փուլում է: Առաջիկայում նախատեսվում է ուղարկել ևս 1 գանգատ: Նախորդ տարիներին կլինիկայի ուսանողների կողմից պատրաստած հերթական ՄԻԵԴ գանգատը գտնվում է ՀՀ կառավարության հետ կոմունիկացման փուլում, իսկ կոմունիկացիան ավարտած գանգատներից 1-ի հետ կապված շարունակում ենք սպասել Դատարանի կողմից վերջնական որոշման կայացմանը:

Կլինիկայում ընդունված 141 գործերից **110 գործ ավարտված է**, մնացյալը ընթացքի մեջ են և, ըստ անհրաժեշտության, փոխանցվելու են հաջորդ տարվա ուսանողներին՝ գործի հետագա ընթացքն ապահովելու համար: Կլինիկան նաև գրանցել է դրական ելքով գործեր, որոնք սկսվել են նախորդ տարիներին և ավարտին հասցվել այս ուսումնական տարվա ընթացքում. Դրանց մասին տեղեկատվությունը պարբերաբար հրապարակվում է Իրավաբանական կլինիկայի ֆեյսբուքյան պաշտոնական էջում[1]:

Տրամադրված իրավաբանական ծառայությունները հիմնականում վերաբերել են սեփականության, ժառանգության, ապահովագրության, փոխառության, աշխատանքային և բանկային պայմանագրերի, վարկային պարտավորությունների, երեխայի խնամքի և ալիմենտի բռնագանձման, ամուսնալուծության, սնանկության, կենսաթոշակի հաշվարկման, հարկային պարտավորությունների, ՀՀ-ում իրավական կարգավիճակ ձեռք բերելու, քրեական վարույթ նախաձեռնելու, քրեական վարույթի ընթացքում իրականացվող քննչական և այլ դատավարական գործողություններին և այլ հարակից իրավահարաբերություններին: Ուսանողների կողմից տրամադրվել են բանավոր իրավաբանական խորհրդատվություն, կազմվել են դիմումներ, հայցադիմումներ, միջնորդություններ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ, ՄԻԵԴ գանգատներ:

Հաշվետու ժամանակահատվածում իրավաբանական կլինիկայում կամավոր հիմունքներով պրակտիկա են անցել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի առկա բակալավրիատի 6 ուսանողներ, որոնց պրակտիկայի ընթացքում իրավաբանական կլինիկայի համապատասխան մասնագիտական խմբերի ուսանողները հանդես են եկել որպես մենթորներ: Կլինիկայում պրակտիկա է անցել նաև ավագ դպրոցի մեկ աշակերտ, կատարել է կամավորական աշխատանքներ՝ օգնելով իրավախորհրդատուներին փաստահավաք գործունեությամբ և այլ տեխնիկական բնույթի հարցերով:

Կլինիկական կրթության ավարտին ուսանողներին տրամադրվելու են ավարտական վկայագրեր:

## <u>ԻՐԱՎՈՒՆՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ</u>

Իրավաբանական կլինիկան այս տարի ևս իրականացրել է «Իրավունք բոլորի համար» ծրագիրը, որի շրջանակներում ծրագրում ընդգրկված 10 ուսանող ներկայացրել է 37 դասախոսություն, որից 31-ը Երևան քաղաքի դպրոցներում և տեղում՝

---

[1] Տե՛ս ԵՊՀ իրավաբանական կլինիկայի ֆեյսբուքյան կայք-էջ https://www.facebook.com/LegalClinicYSU
ԵՊՀ իրավաբանական կլինիկայի կայք-էջ https://www.ysu.am/sci/565

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում տեղի ունեցած ճանաչողական այցերի շրջանակներում, իսկ 6-ը՝ մարզային դպրոցներում (Արագածոտնի մարզ, ք. Ապարան՝ 3 դպրոց, https://www.ysu.am/faculty/79/articles/89387 Սյունիքի մարզ, ք. Կապան՝ 2 դպրոց https://www.ysu.am/faculty/79/articles/93049):

Այցելությունների ընթացքում կլինիկայի ուսանողները ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ իրավունքի տարաբնույթ թեմաներով դասախոսություններ են ներկայացրել աշակերտների և դպրոցների աշխատակազմի համար, ինչպես նաև իրազեկել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և իրավաբանական կլինիկայի գործունեության, ընդունելության, կրթական գործընթացների վերաբերյալ՝ նպաստելով նրանց իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ու ապագա ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը:

Դասավանդման և դպրոցականների հետ քննարկման համար ընտրվել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են, օրինակ՝ բնական իրավունքի և դրական իրավունքի հասկացությունը և տարբերակումը, կրթության իրավունքը, աշխատանքային իրավունք և աշխատանքային իրավահարաբերություններ, պայմանագրային իրավահարաբերություններ, արդարադատության համակարգը, հանցագործության հասկացությունը և հանցակազմի տարրերը, փախստականների կարգավիճակի հասկացությունը և նրանց իրավունքները, թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը և քրեական պատասխանատվությունը, իրավասուբյեկտությունը և գործունակությունը, անհրաժեշտ պաշտպանությունը և ծայրահեղ անհրաժեշտությունը, անչափահասների սահմանադրական իրավունքները, անչափահասների մասնակցությամբ վարույթների իրականացման առանձնահատկությունները, անչափահասների հիմնարար իրավունքների և ազատությունների իրացման երաշխիքները քրեակատարողական հիմնարկներում, և այլն:

Մարզային այցելությունները իրականացվել են ԵՊՀ Ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոնի հետ համագործակցությամբ:

## <u>ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ</u>

Հաշվետու ժամանակահատվածում կլինիկան շարունակել է համագործակցել իր ներպետական և միջազգային երկարամյա գործընկերների հետ, մասնավորապես՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի, ՀՀ Հանրային պաշտպանի գրասենյակի, «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի, Ռաուլ Վալլենբերգի մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի հայաստանյան գրասենյակի հետ: Վերջիններիս կողմից Կլինիկա են ուղղորդվել անվճար

իրավաբանական ծառայությունների կարիք ունեցող մի շարք քաղաքացիներ, ինչպես նաև իրականացվել են համատեղ ծրագրեր, մասնավորապես՝

- 2025թ. սեպտեմբերի 16-ին ԵՊՀ իրավաբանական կլինիկան մասնակցել է «ԲանՈՒԻԳործ. ԵՊՀ էքսպո»-ի նախապատրաստական ու կազմակերպչական աշխատանքներին, իսկ էքսպոյի ընթացքում ներկայացրել է իրավագիտության ֆակուլտետի տաղավարը՝ ուսանողներին և դիմորդներին ծանոթացնելով ԵՊՀ ֆակուլտետների գործունեությունը և կրթական հնարավորությունները: https://www.ysu.am/faculty/79/articles/87396
- 2025թ. սեպտեմբերի 19-20-ը ԵՊՀ իրավաբանական կլինիկայի աշխատակազմը մասնակցել է Ռաուլ Վալլենբերգի մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված՝ Հայաստանյան իրավաբանական կլինիկաների երկօրյա աշխատաժողովին, որը նվիրված էր ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի համալսարանների պրոֆեսորների կողմից հեղինակած «Ինչպես հիմնել և վարել իրավաբանական կլինիկա. Սկզբունքներ և պրակտիկա» վերտառությամբ հայերեն թարգմանված մենագրության շնորհանդեսին:
https://news.miami.edu/law/stories/2025/11/professors-book-receives-international-recognition.html
- 2025թ. դեկտեմբերի 12-14-ը ՄԱԿ ՓԳՀ-ի, «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի համագործակցության շրջանակներում կազմակերպվել է Փախստականների իրավունքի 14-րդ դպրոցը, որին մասնակցել է ԵՊՀ իրավաբանական կլինիկայի 4 ուսանող: Դպրոցը կազմակերպվել է հանրապետության մի շարք բուհերի իրավաբանական կլինիկաների ղեկավարների, մասնագետների և ուսանողների համար՝ նպատակ ունենալով փոխանցել և զարգացնել փախստականների միջազգային և ներպետական պաշտպանության վերաբերյալ գիտելիքները, ապահովել հանրապետական կլինիկաների միջև հետագա համագործակցության ընդլայնումը և ձեռք բերել նոր պայմանավորվածություններ ոլորտում համատեղ ծրագրեր իրականացնելու վերաբերյալ:
https://www.ysu.am/faculty/79/articles/90757
- 2026թ. փետրվարի 27-ին տեղի է ունեցել ԵՊՀ իրավաբանական կլինիկայի և Ռաուլ Վալլենբերգի մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի հայաստանյան գրասենյակի համագործակցության շրջանակում իրավաբանական կլինիկական կրթությանը նվիրված հայալեզու գիտական հոդվածների՝ «Բանբեր երևանի համալսարանի. Իրավագիտություն» գիտական հանդեսի հատուկ թողարկմամբ հրատարակված առաջին ժողովածուի շնորհանդեսը: Ժողովածուն ամփոփում է ոլորտի առաջատար մասնագետների, դասախոսների և պրակտիկ իրավաբանների հետազոտությունները, որոնք վերաբերում են Հայաստանում իրավաբանական կլինիկական կրթության ձևավորմանը և զարգացմանը, ոլորտի պրակտիկ մասնագետներ պատրաստելու գործում

իրավաբանական կլինիկաների դերին և մարդու իրավունքների պաշտպանության գործում դրանց ունեցած նշանակությանը:
https://www.ysu.am/faculty/79/articles/91748

- 2026 թվականի ապրիլի 2-3-ը Իրավաբանական կլինիկայի տնօրենը և տնօրենի օգնականը ՌԴ Եկատերինբուրգ քաղաքում մասնակցություն են ունեցել Ուրալի պետական իրավաբանական համալսարանի կողմից կազմակերպված՝ «Իրավաբանական կլինիկաների գործունեությանը նվիրված ամենամյա միջազգային 5-րդ ֆորումին», որի ընթացքում ներկայացրել են ԵՊՀ իրավաբանական կլինիկայի գործունեությունը, պրակտիկան, զարգացման հեռանկարները և ֆորումի այլ մասնակիցների հետ փոխանակվել աշխատանքային ու մասնագիտական փորձառությամբ: Ֆորումի ավարտին ձեռք են բերվել հետագա համագործակցության վերաբերյալ համաձայնություններ:
https://www.ysu.am/faculty/79/articles/92452

- 2026 թվականի հունիսի 15-16-ը Իրավաբանական կլինիկայի տնօրենը Ռաուլ Վալլենբերգի մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ մասնակցել է Էդինբուրգի համալսարանում կայացած՝ «Կլինիկական իրավաբանական կրության եվրոպական ցանցի (ENCLE) 12-րդ համաժողովին», որը կազմակերպվել էր աշխարհի տարբեր բուհերի իրավաբանական կլինիկաների միջև միջազգային փորձի, գաղափարների փոխանակման, ինչպես նաև մասնագիտական համագործակցային կապերի հաստատման նպատակով:
https://www.ysu.am/faculty/79/articles/96350

- ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի հետ շարունակական համագործակցության շրջանակներում այս տարի ևս ուսումնական պրակտիկայի նպատակով ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողները իրականացրել են նկարահանումներ և հարցազրույցներ ԵՊՀ իրավաբանական կլինիկայի վերաբերյալ լրատվական նյութ պատրաստելու նպատակով:
https://www.facebook.com/reel/743862238785561

Այսքանով թույլ տվեք սահմանափակվել, և եթե չեմ քննարկել առանձին հուզող հարցեր, պատրաստ եմ դրանց անդրադառնալ հնարավոր հարցադրումների շրջանակներում:

Շնորհակալություն ուշադրության համար: